




Այս հրատարակությունը (խմբագրությունը) ներկայացնում է <<Հայաստանի գյուղական համայնքներում ագրոէկոսաբազմազանության պահպանության և օգտագործման միջոցով կենսապայմանների բարելավում>> ծրագրի արդյունքների մի մասը: Գլխավոր Էկոլոգիական Հիմնադրամի (ԳԷՀ) կողմից աջակցվող սույն ծրագիրը համակարգվում է Բիոլոգիայի Ինստիտուտի (IPGRI) կողմից ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագրի իրականացման աջակցությամբ (UNEP):

ՕՇԻՆԴԻ ԴԱՌԸ

Полынь горькая - *Artemisia absinthium* L.



Դեղաբույսի հայկական տարանուններ են՝ ափսինդ, բարձմանեակ, բարձնակ, բարձվենյակ, բացմենակ, նգածաղիկ

Դեղաբույսի նկարագրությունը: Աստղածաղկավորների կամ բարդածաղկավորների ընտանիքին պատկանող դեղաբույս է: Բազմամյա խոտաբույս է, ունի 50-120սմ բարձրության, ծլարմատավոր ճյուղավոր ցողուններ: Ունի արմատամերձ եռակի և ցողունային կրկնակի ճեղքված, հերթադիր, կոթոնավոր, երկարավուն տերևներ: Ցողունները և տերևները գորշ արծաթավուն են և ծածկված են մանր մազմզուկներով: Ծաղկաբույլերը գնդաձև զամբուլներ են, բաղկացած խողովակաձև, մանր, առանց բաժակների, շուրջ 85 դեղին ծաղիկներից, սերմիկները հակաձվաձև են, մանր, 1կգ-ի մեջ՝ մոտ 10 մլն: Բույսը ծաղկում է հուլիս-օգոստոս ամիսներին, պտուղները հասունանում են օգոստոս-սեպտեմբեր ամիսներին: Բազմանում է սերմերով և արմատամերձ բողբոջներով: Ամբողջ բույսն ունի սուր եթերայուղային հոտ և չափազանց դառը համ՝ շնորհիվ ափսինթին և անափսինթին գլիկոզիդների. բույսի դառնությունը զգացվում է անգամ 1/10000 նոսրացումից: Օշինդրը համարվում է երկրագնդի ֆլորայի ամենադառը բույսերից մեկը:

Դեղաբույսը ցրտադիմացկուն է, չորակայուն, լուսասեր, պտղակալում է կանոնավոր: Գոյություն ունի օշինդրի 200 տեսակ, Կովկասում աճում են 28-ը, իսկ Հայաստանում՝ 15-ը, որոնցից միայն մի քանիսն ունեն բուժական նշանակություն: Մեր հանրապետությունում որպես մոլախոտ օշինդրը հանդիպում է բոլոր գոտիներում: Խառը բուսուտների ձևով աճում է շենքերի մոտ, ճամփեզբերին, աղբուտներում, խամահողերում, ցանքերում, ձորալանջերին, թփուտներում, այգիներում՝ հաճախ բարձրանալով ծովի մակերևույթից 1400-2500մ բարձրության վրա:



Ցեղի «Արտեմիզիա» անվանումը հունարեն «արտեմես» բառից է, որը նշանակում է «առողջ»: Ոմանք այդ անունը կապում են Մավզոլ թագավորի կնոջ՝ Արտեմիզիայի անվան հետ, որն իբր, ըստ Պլինիոսի, բուժվել է այս բույսով: Ուրիշներն այդ անունը կապում են հունական աստված

Արտեմիսի հետ: «Ափսինթիում» հունարեն նշանակում է «տհաճ»՝ ելնելով բույսի տհաճ դառնությունից:

Քիմիական բաղադրությունը: Բույսի մեջ հայտնաբերվել են 0,5-2% կապտականաչավուն եթերայուղ, դաբաղանյութեր, ֆլավոնոիդ արտեմետին, կվերբախիտ, լիգնաններ, խնձորաթթու, ֆիտոնցիդներ, իզովալերիանաթթու, սաթաթթու, քացախաթթու, պալմիտինաթթու, կալիումական աղեր, օսլա, սպիտեր, խամագուլեն, խեժ, վիտամիններից՝ K, B6, C, կարոտին, արմատներում՝ ինուլին: Եթերայուղը միատարր չէ, այն իր հերթին պարունակում է տույիլ սպիրտ, ածխաջրածիններից՝ տույոն, պինեն, կադինեն, ֆելանդրեն, բիզաբոլեն և այլն, սեսկվիտերպենային լակտոններ (դառնահամ արսինթին և անարսինթին), այդ թվում նաև մոնոցիկլիկ կետոլակտոններ և ազուլինոգեն, սեսկվիտերպենային գվայանոլիդներ:

Բուժական նշանակությունը: Բուժման նպատակով օգտագործում են բույսի տերևները և ծաղկակիր գլխամասերը: Տերևները մթերում են մինչև բույսի ծաղկելը, իսկ ծաղկաբույլերը՝ մինչև ծաղիկների բացվելը: Հումքը չորացնում են թիթեղյա ծածկով տանիքում, փոված կամ կախված վիճակում: Չոր հումքը պահում են պարկերի մեջ, 3 տարի ժամկետով: Այն կազմում է նախնականի 24-25%-ը:



Դեղաբույսն ունի բուժական կիրառման վաղնջական պատմություն: Դեռևս Պլինիոսն այն օգտագործել է խալիպի դեպքում և նշել, որ եթե ոտքերին կապեն օշինդր, ապա վերանում է հոգնածությունը:

Լոնիցերուսը առաջարկել է ուտելիքին ավելացնել օշինդր, որպեսզի ուժեղանա ստամոքսը, լավանա մարսողությունը և թույներն ու լեղին դուրս գան

օրգանիզմից: Ավիցեննան դեղաբույսը համարել է լեղամուղ, միզամուղ, հակաջերմային, դաշտանը կանոնավորող և ստամոքսի գործունեությունն ուժեղացնող միջոց: Օշինդրը՝ գինու հետ խառնված, նա առաջարկել է ուղիղ աղու ճաքվածքի և թուրքի, իսկ բրնձի և մեղրի հետ՝ ճիճվակրության, սնկային թունավորումների, աչքի և ականջի հիվանդությունների և որոշ ուռուցքների ժամանակ: Մեծ գիտնականը նշել է նաև, որ եթե բույսը խառնվի թանաքին, վերջինս ամուր կլինի և թղթից պոկ չի գա, իսկ շորի մեջ դնելուց՝ այն վանում է ցեցին:

Մ. Հերացին դեղաբույսն՝ առանձին կամ խառնուրդների ձևով, նշանակել է լյարդի և փայծաղի խցանումների, ստամոքսի ուռուցքի, ջրգողության, հեպատիտների, գլխացավերի, աչքի և ոսկրերի հիվանդությունների, մալարիայի, ձգձգվող ջերմերի և այտուցների ժամանակ: Բժշկապետն օշինդրը համարել է ստամոքսը կազդուրող և տոնուսավորող միջոց: Ամիրդովլաթը, բացի վերոհիշյալ դեպքերից, դեղաբույսը տարբեր ձևերով ու եղանակներով օգտագործել է կլոր և տափակ որդերի, լեղաքարերի, մաշկային խոցերի, ասթմայի, ստամոքսացավերի, ստամոքսի խոցի, բքնածության, կարիճի կծածի, արճիճով թունավորման դեպքերում: Ըստ բժշկապետի, դեղաբույսը՝ մեղրի հետ տալով, օգնում է դեղնուկին և կաթվածահարին, ականջի ցավին, չի թողնում որ մարդ շուտ հարբի ակոհոլային խմիչքներից, լավացնում է լսողությունը, բացում միզակապությունը, դաշտանը, ամոքում թուրքը, լավացնում երեսի գույնը:

Ղ. Ալիշանի մեջբերումով, հայկական հին բժշկաբաններում նշվում է, որ օշինդրի ծաղիկները՝ եփուկի ձևով, օգնում են արյունալուծին, ջարդվածքներին, հետանցքի շրջանի ցավերին, դժվարամիզությանը, թունավորումներին, գազանահարին, կարիճահարին: Ծխելուց՝ տան միջից փախցնում է սողուններին, նշի յուղով կաթեցնելով ականջի մեջ՝ կտրում է վերջինիս ցավը: Իսկ հայկական այլ աղբյուրներում նշվում է նաև, որ դեղաբույսն օրգանիզմից հանում է մաղձը, մաքրում ստամոքսը, օգնում այտուցներին և բարձր ջերմությանը, լյարդի և երիկամների հիվանդություններին, ռևմատիզմին, քոսին, քորին, միգրենին, ականջի թարախային բորբոքումներին, մեղրի և գինու հետ կիրառելուց՝ առաջացնում է քուն:

Ռուսիայում բարձր են գնահատել օշինդրի հյութը՝ որպես վերքամոքող և «արյունը մաքրող» միջոց: Այստեղ դեղաբույսի եփուկը կիրառվել է ընդմիջվող կաղության, դեղնուկի, ջրգողության, ճիճվակրության, անքնության, լյարդի, միզապարկի և փայծաղի հիվանդությունների ժամանակ: Միջին Ասիայի ժողովուրդները բույսի ծաղկաթուրմն օգտագործում են խոցային



կոլիտների, լուծերի, թուրքի, մալարիայի, բերանի վատ հոտի, ատոնիկ փորկապության, աղեփքանքի, ճարպակալման, ընկնավորության, գարշահոտ հարբուխի ժամանակ և այլն:

Հնդկական բժշկության մեջ դեղաբույսն օգտագործվում է ընդմիջվող կաղության և ճիճվակրության ժամանակ, ինչպես նաև որպես ընդհանուր տոնուսավորող միջոց: Բուլղարիայում դեղաբույսն օգտագործում են ինչպես գերթթվային, այնպես էլ թերթթվային գաստրիտների, գեղձախտի, թոքային պալարախտի, ընկնավորության, լեղուղիների հիվանդությունների, անկանոն դաշտանի, սպիտակաթորանքի, անեմիաների, անքնության և բերանի վատ հոտի, Գերմանիայում՝ ստամոքսաաղիքային տրակտի սուր և քրոնիկական ախտահարումների ժամանակ: Ֆրանսիայում, ուր օշինդրն անվանում են «առողջության խոտ», օգտագործում են որպես ճիճվամուղ, հակասպաստիկ և խուխամուղ միջոց, ինչպես նաև անեմիաների և ներասթենիայի ժամանակ: Ճիճվակրության դեպքում դեղաբույսն ընդունում են ինչպես ըմպելու, այնպես էլ հոգնայի ձևով՝ խառնելով սխտորահյութի հետ:



Օշինդրը համարվում է մայրը բոլոր խոտաբույսերի: Եփուկի ձևով դեղաբույսը բացում է դաշտանը, վերացնում փորկապությունը և բքնածությունը, միզամուղ է, ընդունակ է դուրս բերելու միզաքարերը: Գինու հետ ընդունելիս՝ օգնում է դեղնուկին, ափիոնով թունավորվածին, ամրապնդում ստամոքսը:

Այլ ազգերի ժողովրդական բժշկության մեջ բույսի թարմ հյութն օգտագործում են վերքերը վարակազերծելու, արյունահոսությունը դադարեցնելու և դրանց հետագա բուժման համար: Թարմ, տրորված տերևները օգտագործում են արտաքին ձևով՝ սալաջարդերի, հողախախտումների և ջլերի պրկման ժամանակ՝ որպես հուսալի ցավազրկող միջոց: Ներքին ընդունման ձևով դեղաբույսն օգտագործվել է որպես ախտահանիչ միջոց խոլերայի, իսկ այլ դեղաբույսերի հետ՝ ալկոհոլիզմի ժամանակ:

Օշինդրը օֆիցինալ է աշխարհի 24 երկրներում, այդ թվում նաև մեզ մոտ: Փորձնական տվյալները ցույց են տվել, որ դեղաբույսի պատրաստուկները, գրգռելով բերանի խոռոչի համզգաց նյարդերի ռեցեպտները, ռեֆլեկտոր կերպով ուժեղացնում են ստամոքսաաղիքային տրակտի գործունեությունը: Այս հարցում առաջնային դեր է խաղում աբսինթինը, որը, մասնավորապես, ընդունակ է դրդելու լեղարտադրությունը, ենթաստամոքսային գեղձի և ստամոքսի հյութազատությունը:

Այն միաժամանակ ընդունակ է կանոնավորելու արյան ճնշումը, իսկ բարձր դոզաներ տալուց՝ սկզբում գրգռում, ապա ընկճում է կենտրոնական նյարդային համակարգը (Ա.Դ. Տուրովա): Բույսի եթերայուղի դրդիչ հատկությունն ուղեղի վրա, հիշեցնում է կամֆորան: Խամագուլենը ակտիվացնում է ռետիկուլա-էնդոթելային համակարգը և ֆագոցիտոզը, միաժամանակ ցուցաբերելով հակաբորբոքիչ ներգործություն: Այն կլինիկայում կիրառվում է բրոնխիալ ասթմայի, ռևմատիզմի, էկզեմայի և ռենտգենային ճառագայթումից առաջացած այրվածքների ժամանակ:

Գիտական բժշկության մեջ դեղաբույսն օգտագործվում է թերսեկրետոր բնույթի քրոնիկական գաստրիտների դեպքում՝ ախորժակը բարձրացնելու նպատակով, ինչպես նաև ծանր հիվանդություններից հետո օրգանիզմի ուժերը վերականգնելու համար:



Դեղաբույսն օժտված է ուժեղ ֆիտոնցիդային ակտիվությամբ: Պետք է հիշել, որ օշինդրի պատրաստուկները 1 ամսից ավելի չպետք է օգտագործել, քանի որ առաջ են բերում նյարդային գրգռվածություն, իսկ հղիության ընթացքում բացարձակապես հակացուցված են: Հոմեոպաթիայում դեղաբույսն օգտագործվում է հիպոացիդ բնույթի գաստրիտների, լեղուղիների հիվանդությունների և հարբուխի

ժամանակ, իսկ անասնաբուժության մեջ՝ ախորժակը գրգռելու և մարսողությունը լավացնելու նպատակով:

Մենք դեղաբույսը թուրմի ձևով օգտագործել ենք քրոնիկական թերսեկրետոր, թերթթու գաստրիտների ժամանակ: Մեզ հաջողվել է վերահաստատել դեղաբույսի դրդիչ ներգործությունը ստամոսահյութի ժամային լարվածության, աղաթթվի դեբիտ-

Ժամի և հյութի պրոտեոլիտիկ ակտիվության վրա: Մենք նախկին աշխատանքներով պարզել ենք, որ այս բնույթի գաստրիտով հիվանդների 10%-ի մոտ առաջանում են գաստրոգեն բնույթի երկաթ-դեֆիցիտային անեմիա: Օշինդրի ներգործության շնորհիվ ոչ միայն կարգավորվել են ստամբսի վերոհիշյալ կարևոր ֆունկցիաները, այլև հիվանդների արյան պատկերը, մասնավորապես էրիթրոցիտների և հեմոգլոբինի քանակները: Այս հարցում, անշուշտ, կարևոր դեր են խաղացել գաստրոմուկոպրոտեինները, որոնց քանակը, բուժման շնորհիվ, նորմալանում է:

Կիրառման եղանակները: Ջրաթուրմ պատրաստելու համար չոր հումքից 1-2 թեյի գդալ 30 րոպե թրմում են 1 բաժակ եռման ջրում, ապա ըմպում 1 օրվա ընթացքում՝ 3-4 անգամ, կամ՝ 1 թեյի գդալ հումքը 20 րոպե թրմում են 2 բաժակ եռման ջրում, ապա ըմպում մեղրով, 1/4 բաժակ, օրական 3 անգամ, ուտելուց 30 րոպե առաջ: Եփուկ պատրաստելու համար 10 գ հումքը 200 մլ ջրում եփում են 15 րոպե, ապա հովացնում ու քամում, ըմպում 1-2 թեյի գդալ՝ վերոհիշյալ ձևով: Հոգնայի նպատակով օգտագործելիս այս եփուկի 2 բաժակին ավելացնում են 1 պճեղ ծեծած սխտոր:



Ոգեթուրմ պատրաստելու համար հումքը՝ 1/5 հարաբերությամբ խառնելով 70° սպիրտի հետ, թողնում են թրմելու 6-7 օր, այնուհետև քամում ու ընդունում 15-20-ական կաթիլ՝ օրական 2-3 անգամ: Մերմերի յուղն օգտագործելու համար 1 մաս տրորված հումքը խառնում են 4 մաս ձիթապտղի յուղի հետ, թրմում 8 ժամ, ապա քամում ու ընդունում 1-2 կաթիլ՝ շաքարի վրա: Փոշին ընդունում են մի պտղուց (0,2-0,5 գ), օրական 3 անգամ: Թարմ հյութից քսուք պատրաստելու համար 1 մաս հումքին ավելացնում են 3 մաս վազելին և 1 մաս լանոլին, լավ խառնում և օգտագործում վերքեր բուժելու նպատակով: Ջրիկ մզվածքը բաց է թողնվում դեղատներում: Այն

ընդունում են 1/2 թեյի գդալ՝ օրական 3 անգամ: Կլոր որդերի դեպքում վերցնում են 2-3 գ օշինդրի տերևափոշի, 2 գ մատուտակի արմատափոշի և 0,5 գ անխոնի սերմնափոշի: Այս բոլորը տեղավորում են սև շլորաչրի մեջ և կուլ տալիս քաղցած ժամանակ, այսպես 5 օր շարունակ (ֆրանսիական եղանակ):



Լեղուղիների խիթերի ժամանակ Մ.Ա. Նոսալն առաջարկում է հավասարաչափ վերցնել օշինդր, եղեսպակ և գիհու պտուղներ: Այս խառնուրդից 1 ճաշի գդալ 30 րոպե թրմել 1 բաժակ եռման ջրում, ըմպել միանվագ՝ օրական 3 անգամ:

Ալկոհոլիզմի դեպքում առաջարկվում է վերցնել 1 մաս օշինդր և 4 մաս ուրց: Այս խառնուրդից 15 գ 15 րոպե եռացնել 200 մլ եռման ջրում, ապա ըմպել 1-ական ճաշի գդալ՝ օրը 3 անգամ, 2-3 ամիս տևողությամբ:

Աղեփքանքի և լուծի հակման դեպքում վերցնում են 10-ական գրամ օշինդր և մատունի, 20-ական գրամ հազարտերևուկ և ձիաձեռ: Այս խառնուրդից 2 թեյի գդալ 30 րոպե թրմում են 1 բաժակ եռման ջրում, ապա ըմպում միանվագ՝ օրական 2 անգամ: Խոլեցիստիտների և խոլանգիտների ժամանակ հավասարաչափ վերցնում

են օշինդր, ծորենու և գիհու պտուղներ, կեչու տերևներ և հազարտերևուկ: Այս խառնուրդից 1 թեյի գդալ 30 րոպե թրմում են 1 բաժակ եռման ջրում, ապա ըմպում միանվագ՝ առավոտյան և երեկոյան ժամերին: Լեղամուղ № 3 թեյի մեջ մտնում են 2-ական մաս օշինդր, հազարտերևուկ, սամիթի և անանուխի սերմեր, 3 մաս անթառամ: Այս խառնուրդից 2 թեյի գդալ 8 ժամ թրմում են 2 բաժակ սառը ջրում և ըմպում կումերով, մեկ օրում:



Ախորժակաբեր № 1 թեյի մեջ հավասարաչափ մտնում են օշինդր և հազարտերևուկ, № 2-ի մեջ՝ օշինդր, խնկեղեգ, ջրառվույտի կոճղարմատ և քեմոնի սերմ, № 3-ի մեջ՝ 2-ական մաս օշինդր և հազարտերևուկ, 1 մաս խատուտիկի արմատ, № 4-ի մեջ՝ 7-ական մաս օշինդր և ջրառվույտի տերև, 6 մաս ոսկեհազարուկ և վերջապես № 5-ի մեջ՝ հավասարաչափ օշինդր

և ջրառվույտ: Այս բոլոր թեյերն օգտագործվում են նույն նպատակի համար և նույն եղանակով. այսպես, 1 ճաշի գդալ հումքը 20 րոպե թրմում են 1 բաժակ եռման ջրում, ըմպում 1-ական ճաշի գդալ, 10-15 րոպե ուտելուց առաջ:

Այլ օգտակար հատկանիշները: Օշինդրն օգտագործվում է որպես համեմունք որոշ ճաշատեսակների, իսկ եթերայուղը՝ սպիրտային խմիչքների արտադրության մեջ: Ընտանի կենդանիներն ուտում են սակավ, իսկ սիլոսի ձևով՝ բավական լավ: Այս դեպքում կաթն ունենում է օշինդրի համ ու հոտ: Բույսը լավ ուտում են ճագարները, կտորեղենը ներկում է կանաչի տարբեր երանգներով:

Ինչպես նաև պարզվել է, որ այն օգնում է ոչնչացնել թոքերի քաղցկեղի 98% բջիջներին ու այդ ամենն այն կատարում է ընդամենը 16 ժամում:

Կալիֆորնիայի համալսարանի մասնագետները նշում են, որ «միամյա օշինդրի» օգտագործումը թույլ կտա թոքերի քաղցկեղի բջիջների զարգացումը կրճատել 28%-ով, սակայն եթե այն միակցել երկաթի հետ, ապա այդ բույսը լիովին ու արդյունավետ կարող է ոչնչացնել քաղցկեղածին բջիջները: Ավելին, փորձերն ապացուցում են, որ այն բացասական ազդեցություն չի թողնում առողջ բջիջների վրա:

Հնում արտեմիզինինն օգտագործվում էր որպես մալարիայի բուժման հզոր միջոց: Իսկ ներկայումս արդեն գիտականորեն ապացուցված է, որ այդ բույսը անչափ օգտակար է նաև քաղցկեղի դեմ պայքարում:

Երբ հերթական փորձի ժամանակ գիտնականները արտեմիզինի վրա ավելացրել են երկաթ ու այն ամրացրել են քաղցկեղով ախտահարված թոքերի հյուսվածքների վրա, այդ ժամանակ արտեմիզինինը ներագդել է «վատ» բջիջների վրա՝ առանց վնասելու «առողջ» բջիջները:

Մասնագետները նշում են, որ ընդհանուր առմամբ հետազոտության արդյունքները ցույց են տվել, որ արտեմիզինինը կառավարում է քաղցկեղածին բջիջների վերարտադրողական աճը:

Հազարավոր տարիներ Չինաստանում օշինդրի թուրմն օգտագործվում է քաղցկեղի ու մալարիայի բուժման համար: Այժմ արդեն գիտնականները նշում են, որ վերջինիս հարստությունը ոչ թե երկաթն է այլ այլ միկրոէլեմենտներ, որոնցից էլ և «վախենում» է քաղցկեղը:



Որոշ ընկերություններ արդեն հայտարարել են, որ պատրաստվում են տարեկան արտադրել 50-ից 60 տոննա արտեմիզինին, որը կվաճառվի քաղցկեղով հիվանդներին:

Ձեզ ենք ներկայացնում վերջինիս օգտագործման ժողովրդական բաղադրատոմսեր:

Քսուր.

- Չորացրած, փոշիացրած տերևը խառնեք կենդանական ճարպի կամ բուսայուղի հետ (1:4): Օգտագործեք վերքերի, այրվածքի, ցրտահարված հատվածների բուժման համար:
- Բուսայուղով պատրաստված քսուրը փափկեցնում և խոնավացնում է մաշկը, ամրացնում մազաբմախոնները, վերացնում թեփը:

Անքնություն. Բարձի երեսի տակ դրեք մի փոքր օշինդրի խոտ:
Arthemsia absinthium-օշինդր դառը

Բույսը շատ դառն է և մեծ քանակության դեպքում վնասակար է առողջությանը: Սակայն ճիշտ հաշվարկված չափաբաժինների դեպքում ունի բուժիչ ազդեցություն: Կիրառվում է գիտական և ժողովրդական բժշկության մեջ և նաև հոմեոպատիայում, վաղուց ի վեր օգտագործվում է որպես համեմունք: Դեղագործությունում կիրառվում է մաքսողությունը լավացնող դեղորայքի մեջ: և

Հրաշալի դեղատոմսերը.

- 77 գրամ օշինդրը մի օր դնել ջրի մեջ, հետո եփել, քամել: Ավելացնել 350 գրամ մեղր կամ շաքար, եփել մինչև թանձրանալը: Խմեք 1-ական ճ/գ, օրը 2-3 անգամ՝ սնվելուց առաջ (Ջ.Ս.):

Ըստ Ամասիացու՝ օշարակը օգտակար է լյարդի, ստամոքսի հիվանդությունների, փայծաղի և լեղապարկի քարացածության դեպքում, որն առաջացել է ջերմությունից: Կօգնի նաև միզուղիների հիվանդությունների դեպքում և դուրս կհանի միզապարկի քարերը:



Ընդհանուր թուլության դեպքում կօգնի օշինդրի յուղամզվածքը.

- Եթե 6 գրամ օշինդրը (փոշին) խառնեն, մեղրի հետ և տալ թուրքով տառապող մարդուն, շատ կօգնի:

Որպես համեմունք և բուժիչ հումք՝ մթերում են տերևը՝ մինչև բույսի ծաղկելը:

Օշինդրը ակտիվացնում է ստամոքսահյութի և լեղու արտազատումը, ունի վերքամոքիչ,

հակախոցային, որդաթափ ազդեցություն, կարգավորում է արյան ճնշումը: Թույլ լուծողական է:

Զգուշացում: Չափաբաժինների չարաշահումը և երկարատև օգտագործումը կառաջացնի ջղակծկում, փսխում, ուշագնացություն, նույնիսկ՝ պատրանք: Օգտագործման առավելագույն ժամկետը 60 օր է:

Թուրմ. Օշինդրի 1ճ/գ թարմ (կես գդալ չոր) խոտը 30-60 րոպե թրմեք (փակ տարայում) 200 մլ եռջրի մեջ: Քամեք: Խմեք 1-ական ճ/գ, օրը 3 անգամ՝ սնվելուց 30 րոպե առաջ:

Կիրառում են՝ կանացի հիվանդությունների, ստամոքսաբորբի, երիկամների և միզապարկի բորբոքային հիվանդությունների, հազի, ստամոքսի եւ 12-մատնյա աղիի խոցի դեպքում:

Խոլեցիստիտ. Մանրացրեք, խառնեք չոր օշինդրի, ոսկեհազարուկի խոտերը, պղպեղադաղձի տերևը (1:1:1): Հումքի 1 թ/գ-ն 10 բույսեր թրմեք 350 մլ եռջրում: Քամեք:



Խմեք 100-ական մլ, օրը 3 անգամ՝ սնվելուց կես ժամ առաջ՝ գոլ վիճակում:

Ստամոքսի

քաղցկեղ. Մանրացրեք դառը օշինդրի չորացրած արմատը, 10 օր թրմեք 70 տոկոսանոց սպիրտի մեջ (1:5): Քամեք և թափեք հեղուկ մասը: Հումքը մզեք և վերականգնեք նախնական ծավալը

սպիրտով: Խմեք 15-20-ական կաթիլ, օրը 3 անգամ՝ 50 մլ ջրով: Դեղատոմսը կիրառելի է նաև արգանդի վզիկի քաղցկեղի դեպքում:

Հելմինտոզ. Օշինդրը մաքրում է օրգանիզմը լյամբլյաներից, տրիխոմոնադից, որոնք խաթարում են նյութերի փոխանակման գործընթացը օրգանիզմում, առաջացնում բորբոքումներ, մաշկային հիվանդություններ: Բացի վերոգրյալ թուրմի օգտագործումից, կարելի է մաքրել օրգանիզմը բույսի ծաղիկով, որը մոտավորապես լուցկու գլխիկի չափ է: Մեկ ծաղիկը դրեք հացի խմորի մեջ, պատրաստեք փոքրիկ գնդիկ: Կուլ տվեք 1-2 այդպիսի «հաբ»՝ սնվելուց առաջ կամ հետո:

Վարիկոզ. Տրորեք օշինդրի թարմ տերևիկները, խառնեք կտրված կաթի թանձր մասի հետ (1:10): Քսեք թանգիֆի վրա և ամրացրեք այն հատվածին, որի վրա երակներն ավելի լայնացած են: Օգտագործեք պոլիէթիլենային թաղանթ: Ոտքերը դրեք բարձի վրա և հանգստացեք 30-40 բույսեր:

Ստամոքսաբորբ. Մանրացրեք, խառնեք օշինդրի և եղեսպակի խոտերը (1:1): Հումքի 1 ճ/գ-ն 2 ժամ թրմեք ջերմապահում 200 մլ եռջրով: Քամեք: Խմեք 50-ական մլ, օրը 3-4 անգամ՝ սնվելուց առաջ: Շատ օգտակար է սրացման շրջանում (երկրորդ օրը):

Մետեորիզմ. Խմեք 50-ական մլ վերոգրյալ թուրմը 1 թ/գ մեղրի հետ, օրը 3 անգամ՝ սնվելուց կես ժամ առաջ: Շարունակեք 3-4 օր:

Միումա. Խառնեք դառը օշինդրի չոր արմատը և խոտը (1:1): Հումքի 5 ճ/գ-ն թրմեք 15-20 րոպե 500 մլ օղու մեջ՝ մուխ տեղում, պարբերաբար թափահարեք: Քամեք: Խմեք 1-ական թ/գ, օրը 3 անգամ՝ սնվելուց 30 րոպե առաջ: Շարունակեք 2 ամիս:

Օշինդրի ցածրահասակ տեսակները



Շմիդտի Օշինդր

Հայրենիքը Հեռավոր Արևելքն է: Հանդիպում է նաև Ճապոնիայում, Կուրիլյան կղզիների հարավում, Սախալինում: Աճում է ծովեզերքին և սարերում՝ աղքատ հողերի վրա: Տարածված է Նանա տեսակը, որի բազմաթիվ ճյուղերը կազմում են ցանցկեն, կլոր, 25 սմ բարձրությամբ

թփեր: Տերևներն արծաթականաչավուն են: Ծաղկում է օգոստոսին:



Օշինդր դաշտային (Artemisia campestris, Полынь полевая)

Տարածված է Սիբիրում: Աճում է սոճուտներում, տափաստաններում, ավազուտներում ու պարապուտներում:

15-60 սմ բարձրությամբ բազմամյա բույս է: Կարմրավուն ցողունը ճյուղավորված է: Ծաղկում է հուլիսին: Ծաղիկները կարմրավուն են կամ դեղին, գտնվում են ձվաձև զամբյուղներում:



Դառը Օշինդր (Artemisia absinthium, Полынь горькая)

Ամենադառը բույսն է: Սիրում է բաց՝ արևկեզ տեղերը: Դառը Օշինի կողքին վատ կամ ընդհանրապես չեն աճում նույնիսկ ամենառչպահանջկոտ խոտերը: Դրա արտադրած ֆիտոնցիդները ճնշող ազդեցություն ունեն այլ բույսերի վրա: Իսկ բուրմունքը լավն է: Ծաղկում է հուլիսին: Չնայած մանր և ոչ գրավիչ

ծաղիկներին, Դառը Օշինը լավ դեկորատիվ տեսք ունի:



Օշինդր Լուիզիանական (Artemisia ludoviciana, Полынь луизианская)

Բազմամյա, մոտ 1 մ բարձրությամբ խոտաբույս է: Կազմում է ընդարձակ թփուտներ: Ամռանը հայտնվում են անշուք, շագանակագույն ծաղիկները, որոնք ավելի լավ է պոկել՝ տեսքը չփչացնելու համար: Միրում է արևկող տեղերը, ցրտադիմացկուն չէ, ձմռանը պետք է ծածկել: Տանել չի կարողանում ջրախեղ վիճակը:



Օշինդր Միամյա (Artemisia annua, Полынь однолетняя)

Տարածված է Հարավային և Հարավարևելյան Եվրոպայում, Ասիայում, ներմուծվել է նաև Հյուսիսային Ամերիկա:

Միամյա բույս է, կազմավորում է 150 սմ բարձրությամբ, բրգաձև թուփ: Տերևները մուգ կանաչ են, տրորելու դեպքում բուրբուռ են: Ծաղիկները գեղեցիկ չեն: Լավ է դիմանում կտրելով ձևավորմանը:



Օշինդր Պոնտոսյան (Artemisia pontica, Полынь понтийская.)

Տարածված է Հարավային և Հարավարևելյան Եվրոպայում, Ասիայում, ներմուծվել է նաև Հյուսիսային Ամերիկա:

Միամյա բույս է, կազմավորում է 150 սմ բարձրությամբ, բրգաձև թուփ: Տերևները մուգ կանաչ են, տրորելու դեպքում բուրբուռ են: Ծաղիկները գեղեցիկ չեն: Լավ է դիմանում կտրելով ձևավորմանը: